ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

27.07.2026թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Ա.Ղարիբյանը -մարզպետի տեղակալ
Ռ.Մարգարյանը - մարզպետի տեղակալ
Հ.Ադամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Է.Կռոյանը - մարզպետի օգնական
Մ.Դալլաքյանը - գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Ա.Շիրինյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Երիցյանը, Վ.Ղարսայանը, Վ.Հովհաննիսյանը, Լ.Մաթոսյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բեջանյանը, Գ.Մելիքսեթյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**
   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/
2. **Այլ հարցեր**:

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրեցին կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց.

1. **ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝** Ներկայացնել ամփոփ տեղեկատվություն վարչության կողմից շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների և մարզպետի մոտ ընդունելության գրանցված քաղաքացիների վերաբերյալ:

/ժամկետ՝ 1 շաբաթ/

2. **ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Ղարիբյանին և Ռ.Պողոսյանին՝**
2-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություն բուժաշխատողի օրվա հետ կապված միջոցառումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Հ.Ադամյանին, աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Երիցյանին՝

3.1 Կազմակերպել խորհրդակցություն Լոռու մարզի ենթակայության դպրոցների տնօրենների և վարչատնտեսական համակարգողների հետ նոր վերանորոգված դպրոցների գույքի պահպանման հետ կապված հարցերի վերաբերյալ:

3.2 Ներկայացնել թարմացված թվային տվյալներ մարզում ատեստավորված ուսուցիչների վերաբերյալ:

3.3 Ներկայացնել առաջարկություն Լոռու մարզում մշակութային միջոցառումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ՝ առաջարկելով թիրախային խմբեր /որպես միջոցառման անցկացման ձևաչափ դիտարկել բացօթյա միջոցառումները/:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության պետ Վ.Ղարսայանին, ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ Մ.Խեչումյանին՝

Հրավիրել աշխատանքային խորհրդակցություն Լոռու մարզի համայնքների ղեկավարների հետ, առաջարկել անհրաժեշտ և պատշաճ վերահսկողություն սահմանել շինարարական աշխատանքների իրականացման որակի պահպանման, բնակավայրերի սանիտարական պատշաճ վիճակի ապահովման, համայնքային տարածքների բարեկարգման, բնակավայրերի մայթերն ու հանրային տարածքները մոլախոտերից, ավելորդ բուսականությունից և աղբից մաքրելու ուղղությամբ:

5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ա.Շիրինյանին՝

Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների կատարման, մասնավորապես Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ համայնքներում թերությունների վերացման ուղղությամբ և ներկայացնել տեղեկատվություն:

/ժամկետ՝ 1 շաբաթ/

6. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերով վարչության պետ Ռ.Պողոսյանին՝

6.1 Ներկայացնել տեղեկատվություն նախարարությանը ենթակա Լոռու մարզի բժշկական կազմակերպությունների կողմից իրականացված իմունականխարգելիչ պատվաստումների ցուցանիշների վերաբերյալ և իրականացնել աշխատանքներ դրանց բարելավման ուղղությամբ:

6.2 Ներկայացնել տեղեկատվություն մարզի առողջապահական կազմակերպությունների կողմից ապահովագրական փաթեթների շրջանակներում մատուցված ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև կենսաթոշակառուների թվի փոփոխության և ստացվող գումարների չափի վերաբերյալ:

7. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

Յուրաքանչյուր ուրբաթ ներկայացնել Լոռու մարզի համայնքներում հաջորդ շաբաթվա ընթացքում նախատեսվող և ընթացիկ շաբաթվա ընթացքում իրականացված շրջայցերի վերաբերյալ տեղեկատվություն, իրականացնել գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ իրազեկման և լուսաբանման աշխատանքներ, կազմակերպել հանդիպումներ և քննարկումներ բնակչության հետ, ինչպես

նաև յուրաքանչյուր շաբաթ ներկայացնել հաշվետվություն իրականացված աշխատանքների վերաբերյալ:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-28 10:55:01 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձ. Կ.Ադամյան
Հեռ. 0322 /2-10-24/